

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
(Մենդյան 60-ամյակի առթիվ)

Հ. Գ. ԲԱՆԱՍԻՐԱՆ

Կան բանաստեղծներ, որոնք հանգես են եկել նաև գրականության պատմությանը կամ հատկապես ժամանակակից գրականության ընթացքին վերաբերող հոգվածներով և բանասիրական ուսումնասիրություններով։ Սակայն յուր քերին և վիճակվել ղեկավարվածն ըստ ամենայնի ղուգակցել գիտությանը, այսինքն լինել միաժամանակ և՛ գորդ, և՛ զրականագետ-բանասեր՝ երկու ասպարեկում էլ սպահովելով բարձր մակարդակի Այդ քերից էր Պարույր Սևակը։

Կենսա ուսանողության ստաջին տալիներից Պ. Սևակի տաղանդը ղարգացել է երկու հիմնական ուղղությամբ՝ բանաստեղծություն և բանասիրություն։ Ուսանողական վերջին երկու տարիներին նա արդեն իր սեփական ոճն ունեցող, ասել է թե՛ ինքնուրույն ու անհատական մտածող էր, հասուն գրականագետ-բանասեր։ Դրա լավագույն վկայությունն է 1945 թ. գրած «Վարուժանի պոեզիան» գիլոմալին աշխատանքը, որը թերևս այսօր էլ մնում է մեծ քնար-երգուի ստեղծագործությանը նվիրված լավագույն ուսումնասիրություններից մեկը։ «Այստեղ, — ինչպես գրել է Ա. Արիստակեսյանը, — գրականագետ Պարույր Սևակի վերլուծական մաքին, ղրական երևույթները ղմբոնելու ու բացատրելու գիտական կարողությանը միախառնվում է բանաստեղծ Պարույր Սևակի բանաստեղծական ղգացողությունը»։ Նույն այդ ոճը հետագայում առավել մշակվեց նրա գիտական հոգվածներում և ուսումնասիրություններում։

Համալսարանում բանասիրական ընդհանուր պատրաստվածություն և բարձրագույն գիտելիքներ ձեռք բերած Պարույր Սևակը, բնականաբար, ձգտել է մասնագիտական կրթության։ Ուստի և ավարտելուց անմիջապես հետո ընդունվել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայ հին և միջնաղարյան գրականության մասնագիտությամբ։ Նրա գիտական ղեկավարն էր անվանի հայագետ Կ. Մելիք-Օհանջանյանը։ Որպես ղիսերտացիոն աշխատանքի թեմա Սևակն ընտրել էր բանասիրական և գրականագիտական առումով մի ղափաղանց բարդ ու աշխատատար թեմա՝ «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում»։

Ասպիրանտական տարիներին ղիսերտացիոն թեմայի վրա աշխատելու ընթացքում Պ. Սևակն խորամուխ է եղել հայ միջնաղարյան գրականության բարձրագույն հարցերի ու խնդիրների մեջ, ուսումնասիրել տեսական, բանասիրական ծավալուն գրականություն։ Բանասիրական աշխատանքն անչափ հրապուրում էր նրան և մղում մանրակրկիտ հետազոտությունների։ Սակայն նրա կոշումը սոսկ բանասիրությունը չէր. նրա մեջ առավելապես խոսում էր բանաստեղծը, որը եթե մի կողմից օգնում էր նրան յուրովի մեկնաբանելու գրական երևույթները, մյուս կողմից խանգարում էր առավել խորանալու այդ երևույթների մեջ։ Ինքը՝ Պարույր Սևակն այդ մասին ղրել է հետևյալը. «...լինեի բանաստեղծ, ասել է թե սիրտս միասիրտ, չեղկփեղկված լինեի, ասել է նաև՝ իսկական համբերություն ունենալի, կնստեի և կսովորեի այն ամենը, ինչի

¹ Ա. Արիստակեսյան. Պարույր Սևակ. երևան, 1984, էջ 60։

պակասն զգացվում էր—տվյալ դեպքում լեզուները: Բայց դե արժե՞ բանաստեղծ չլինելու գնով լավ գիտնական լինել»²:

Այսուհանդերձ, Պ. Սևակին հաջողվեց մնալով բանաստեղծ, այն էլ՝ մեծ բանաստեղծ, դառնալ գիտնական, այն էլ՝ լավ գիտնական:

Բանաստեղծն ու գիտնականը Պարույր Սևակի մեջ, ի սկզբանե, կազմել են մի բարդ հակադրամիասնություն՝ պայմանավորելով նրա բանաստեղծական և գիտական ժառանգության ինքնատիպությունը:

1951—59 թթ. ուսանելով և ա-
ա դասախոսելով Մոսկվայի Մ.
Գորկու անվան համաշխարհային
րականության ինստիտուտում,
Պարույր Սևակն ստեղծել է իր
ավագույն բանաստեղծական եր-
երը («Մարդը ափի մեջ», «Ան-
տելի դանգակատուն»), միաժա-
անակ գրել է գիտական հար-
ուսման հարուստ հոդ-
ածներ ու ղեկուցումներ: Մոսկ-
յայից նա վերադարձավ արդեն
որպես լայն ճանաչում գտած բա-
նաստեղծ, որը հիրավի դարձավ
ժամանակի շունչը», կապվեց
նյարդով յուրաքանչյուր իր օրե-
ին և իր դարին», արձագանքեց
զգային կյանքի բոլոր քիչ թե-
տ նշանակալից տեղաշարժե-
ին, և նրա ասելիքը արտահայտ-
եց բազմադան ժանրերով. և՛ որ-
ինս պոեմ ու բանաստեղծություն,
և՛ որպես հրապարակախոսություն
և գրական քննադատություն, և՛
պես գիտական հոդված, ղե-
ուցում ու գրախոսություն: Բանաստեղծական ու գիտական խոսքը նրա երկի-
ւմ արտահայտվեցին առավել «հաշտ մտերմությամբ»: Դրա լավագույն վկա-
ություն են Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի (1962 թ.) առթիվ
ված «Թո՛րի դեմ գրիչ» գիտական ղեկուցումը, ինչպես նաև «Եվ այդ մի
հաշտոց անուն» պոեմը: Մի դեպքում որպես գիտնական-բանասեր, մյուս դեպ-
քում՝ որպես արվեստագետ-բանաստեղծ, Պ. Սևակը գնահատել է Մեսրոպ Մաշ-
տոցին իբրև հայ ժողովրդի «ինքնահիշողության» սկզբնավորողի և «վիթխարի
ղաքագետի»:

Մաշտոցյան սխրանքով պահպանված մայրենի լեզուն համարելով ազգա-
ահպանման կարևորագույն գործոնը, նա իր ողջ հոգվածներում («Բաց նա-
կ» ...բառարանը «կազմողներին», 1966 թ., «Պահպանենք և հարստացնենք
յրենին», 1962 թ.) առաջ է քաշել հայոց լեզուն անաղարտ պահելու, մաք-
ելու և զարգացնելու անհրաժեշտությունը: Լայնախոհ բանաստեղծ-գիտնա-
անը մեծ կրքով ծառացել է քաղքենի «հայրենասերների» ազգային սնապար-
ություն դեմ, դնելով ազգային ճշմարիտ ինքնաճանաչման ու ինքնագնահատ-
ն պահանջը («Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվու-
րուն», 1966 թ.):

Նույն այդ շրջանում Պարույր Սևակը հանդես եկավ նաև մի չափազանց
ծեքավոր պատմաբանասիրական ուսումնասիրությամբ, ուր ցույց են տըր-
ած այն պատմաքաղաքական և մշակութային ու կրոնադավանաբանական



² Այս խոստովանությունը Պ. Սևակը կատարել է 1948 թ. օգոստոսի 15-ին իր սրահում (ե՛ս և՛ Ա. Արիստակեսյան. Պարույր Սևակ, էջ 69):

առնչակցությունները, որ գոյություն են ունեցել Երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և ադիվանների միջև: Ընդ որում, քաջատևդակ լինելով Հայաստանի պատմական աշխարհագրությանը՝ ցույց է տվել Ադիվանքի տարածքային սահմանները պատմական տարրեր ժամանակաշրջաններում³:

Պ. Սեակր զանազան առիթներով իր խոսքն է ասել նաև մեր մատենագիրների և դասական գրողների մասին: Հիշարժան են հատկապես «Մեր քնարերգության Կահաններ» (1962 թ.), «Գրիգոր Նարեկացի» (1965 թ.), «Եղիշե Զարենցը և արդիականությունը» (1967 թ.), «Հայ նոր քնարերգության հիմնադիրն ու առաջին դասականը» (1968 թ.) և «Թումանյանի հետ» (1970 թ.) հոգվածներն ու զեկուցումները: Նա համոզիչ կերպով ցույց է տվել, որ Մկրտիչ Պեղիբաշյանն է այն առաջին բանաստեղծը, որով սկսվում է հայ նոր քնարերգության, միաժամանակ՝ պոեզիայի, որ «մեր նոր քնարերգության առաջին մեծը» Պետրոս Գուրջանն է: Անդրադառնալով իր մեծ հոգևոր ուսուցչին՝ Եղիշե Զարենցին, զնահատել է նրա հումկու տաղանդը, նորարար բանաստեղծի անզնահատելի դերը, նրա ստեղծագործական պարզացման ներքին փուլերը և ազդային ու համազգային խոշոր արժեքը:

Պարույր Սեակր չէր կարող չանդրադառնալ նաև «մեր բանաստեղծներից ամենից ավելի հայացք ամենից ավելի քնաշխարհիկ» Հովհաննես Թումանյանին, որին իրավացիորեն համարել է «գրականությունից վեր երևույթ», բանի որ նա «համակ կյանք է և կենդանություն: Նրա համար զեկագիտական գեղեցիկը մակաբերված է եղել կյանքի տալածին»⁴: Այս և համանման բնութագրումները, որ արդասիք են գրականագիտական խոր վերլուծումների, այսօր մեզնի են դրական ու գիտական շրջանառության մեջ ողջուստ անհերքելի ճշմարտություններ:

Պ. Սեակր առավել ևս չէր կարող չանդրադառնալ մեր գրականության մեծագույնին, «մեր բանաստեղծության հանճարների հանճարին»՝ Գրիգոր Նարեկացուն, որի կենտրոն ակունքից սնվել էր ի սկզբանե թափանցելով նարեկացու անմահ ստեղծագործության բուն էություն մեջ և տեսնելով այնտեղ խրտալուծ վերածնության ոգին, որով նաև պայմանավորվում է նրա անմահությունը, մատնանշել է, որ Նարեկացին «Աստծուն հետախուզում է ոչ թե սլարդապես ի սեր Աստծու, այլ հանուն Մարդու Ուստի և նա մեկն է աշխարհիս այն սակավաթիվներից, որոնց մականունն է ՄԱՐԻԱՆՈՒԹՅՈՒՆ: Նա մեր առաջին մարդագիրն է և մեծագույն մարդերգուն... Իրենից վեց դար հետո ծնված մեծ անգլիացու շնորհիվ աշխարհն ստացավ մարդու սքանչելի գովերգությունը՝ Համլետի բերանով: Բայց նույնիսկ Շեքսպիրն ինքը կգերազանցի իր այս մեծ նախորդի նույնատիպ խոսքը»⁵, եվ Պ. Սեակր իր փայլուն թարգմանությամբ մեջ է բերում այդ խոսքը, որը հիմնովի համաշխարհային մարդերգության գլուխգործոցներից է: Ի դեպ, ասենք, որ իր եղբորական մահից մի քանի ամիս առաջ նա Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հանձնարարությամբ պատրաստվում էր աշխարհաբարի վերածել ամբողջ «Մասեան ողբերգութեան» երկը:

* * *

Պարույր Սեակր գրականագիտ-բանասերին առանձնապես զբաղում էր Սալաթ-Նովան: Մեծ գուսան-բանաստեղծի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության ասպարեզում նա ներդրեց իր անժխտելի լուծման՝ գրելով իր սոնետներ Գ. Ախվերդյանի, Գ. Ասատուրի, Հովհ. Թումանյանի, Գ. Լևոնյանի, Մ. Հասրաթյանի անունների կողքին:

Նրա հետաքրքրությունը Սալաթ-Նովայով սկսվում է դեռևս 1950-ական թթ. վերջերից: 1959-ին լույս է տեսնում Սալաթ-Նովայի հայերեն, վրա-

³ Հոգվածը լույս է տեսել Լ. Մ. Մնացականյանի «Եղիշե Զարենցի մասին» (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, N 1, էջ 177—190):

⁴ Պ. Սեակր. Երկեր, հ. 3, Երևան, 1983, էջ 195:

⁵ Նույն տեղում, էջ 66—67:

յիներեն և աղբյուրներին խաղերի ժողովածուն՝ Մ. Հասարթյանի աշխատասիրությամբ և թարգմանություններով: Այդ առթիվ Պ. Սեակը գրում է «Նորացա՛յ Սայաթ-Նովան» գրախոսականը⁶, բարձր գնահատելով Մ. Հասարթյանի կատարած բնագրագիտական-թարգմանչական աշխատանքը:

Դժվար է Պ. Սեակի բանաստեղծական արվեստի և աշխարհընկալման մեջ գտնել Սայաթ-Նովայի քնարերգությունից որևէ որոշակի հետք: Եվ դա այդպես է, քանի որ Սեակը չէր պատկանում, պայմանականորեն ասած, «Սայաթ-Նովայի ուղղությանը», որ վերաբերում է հայ քնարերգության ժողովրդագուսական երակին: Այսուհանդերձ, Սայաթ-Նովան իր հախուտ «հագու աշխարհով», արևելյան գույների ճոխությամբ և աղբյուրի երանգների նրբություններով, իր սառնապալից սիրերգությամբ և մարդասիրական բարձր գաղափարներով գրավել և հուզել է ընդհանուր առմամբ անհատական-ինտելեկտուալ պոեզիային դավանող բանաստեղծին, որոշ աչքեցություն ունենալով նրա ստեղծագործության ոգու վրա: Սա մի առանձին բարդ երևույթ է, որի լուսաշանությունը դուրս է ներկա հոգվածի սահմաններից: Կարևորը Պարույր Սեակ—Սայաթ-Նովա հոգեհարազատ կապն է, որով պայմանավորված է Սեակի չմիայն պոետական ժառանգորդությունը, այլև գիտական հետաքրքրությունը լեզվի Սայաթ-Նովան:

1962 թ. վերջերից Պ. Սեակը սկսում է «Սայաթ-Նովա» մենագրության նասապատրաստական աշխատանքները և արդեն հաջորդ տարվա գարնանը շտաղրում է ուսումնասիրության հիմնական մասը («Սայաթ-Նովայի ստեղծագործությունը»), որի մեծ մասն առանձին հոդվածների ձևով տպագրում է՝ Երևան և գիտական մամուլի էջերում, երգչի ծննդյան 250-ամյակի օրերին: Իսկ թվականին նա աշխատանքի է հրավիրվում ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժին, որտեղ կսել և ընդհատել էր իր գիտական գործունեությունը: Նա շարունակում և ամողջացնում է «Սայաթ-Նովա» մենագրությունը, որը լիովին պատրաստ էր արել 1966 թ.⁷: Հաջորդ տարվա հունիսին նա այդ ուսումնասիրությունը ներկայացնում է պաշտպանության որպես թեկնածուական դիսերտացիա, որի հաար, արդարացիորեն, միանգամից արժանանում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճանի: Մենագրությունը լույս տեսավ 1969 թ.: Սաայն այդքանով շտաղմեց բանաստեղծ-բանաստեղծի ասելիքը մեծ գուսան-բանաստեղծի մասին: Իր կյանքի վերջին երկու տարում նա աշխատում էր «Սայաթ-Նովան և միջնադարյան տաղերգուները» ուսումնասիրության վրա: Շարունակելով խորանալ երգչի եռալեզու ստեղծագործության մեջ, նա փորձել է այսպես ասել նոր, շուտամասիրված շերտեր, բացահայտել երգչի ստեղծագործության առնչակցությունը ինչպես հայրենի, այնպես էլ ընդհանուր արևելյան քնարերգության ավանդներին: Սակայն, դժբախտաբար նա չհասցրեց լիովին ամբողջացնել իր նոր հետազոտությունը և թողեց մի անավարտ ձեռագիր, որի հրատարակությունը մեր բանասիրության համար չափազանց անհրաժեշտ և շահեկան⁸:

Ձեռքի տակ շունենալով մեծ բանաստեղծի այդ անավարտ աշխատությունը, մենք կանդգադառնանք միայն նրա «Սայաթ-Նովա» մենագրությանը:

Պարույր Սեակին հավասարապես հետաքրքրել են ու զբաղեցրել Սայաթ-Նովայի կենսագրության և ստեղծագործության խնդիրները: Դրանց համատեղ

⁶ Տե՛ս «Գրական թերթ», 1959, № 37: Պ. Ս և Կ. Երկերի ժողովածու. հ. 5, Երևան, 1974, 40—45:

⁷ Այդ թվականին «Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 2) լույս տեսավ Պ. Սեակի «Իմ էնվել Սայաթ-Նովան» մեծարժեք հոդվածը:

⁸ Պ. Սեակի այդ աշխատանքի մասին առավել մանրամասն տե՛ս Լ. Արիստակեսյան. Լ. աշխ., էջ 390—391:

քննությունը տվյալ պարագայում անհրաժեշտ է, քանի որ Սայաթ-Նովայի պործը նրա կյանքի անմիջական արձագանքն է, բանաստեղծական վերարտադրումը: Ուստի և մենագրության առաջին ղլխի մեջ (ինչպես և ծանոթագրություններում) հեղինակը յուրովի պարզելու ու ճշտելու է երգչի կենսագրության կարևոր հարցերը, իսկ երկրորդ ղլխի մեջ անդրադարձել նրա ստեղծագործության վերլուծությանը:

Սայաթ-Նովայի կենսագրությունն ու ստեղծագործությունը լի են անեղծվածներով, լեզունդախառն մոտիվ ու խրթին հարցերով: Եվ ահա 130 տարի է, ինչպես ասիրությունը առկա տվյալների հիման վրա փորձում է լուսարանել այդ հարցերը, հնարավոր ամբողջությամբ ու խորությամբ ներկայացնել սիրելի երգչի մարդկային ու բանաստեղծական դիմանկարը: Առեղծվածներն այնքան հետաքրքիր են և նրանց լուծումը այնքան դժվարացրել, որ հաճախ դրանց ձեռք են դարձնում նաև ոչ մասնագետները և նույնիսկ բանասիրության հետ ոչ մի կապ չունեցող մարդիկ: Սակայն վերջիններիս ջանքերով առավել խճողվում են հարցերը, առաջանում են խոչընդոտներ, ծաղում ավելորդ բանավեճեր: Այդպիսի է եղել ի սկզբանե: Բայց բարեբախտաբար միշտ էլ հանգես են կել լրջմիտ մասնագետներ, որոնք ասել են իրենց ծանրակշիռ խոսքը: Սյրպիսի մասնագետ էր Պ. Սեակը, որը խորապես զգալով ուսումնասիրվող առարկայի բարդությունը, գրել է. «Սայաթ-Նովայով հարկավոր է զբաղվել և ոչ թե պարզապես, ըստ որում դժգոհվել հանձնել Սայաթ-Նովայի և ոչ թե ընդդեմ»⁹: Նա ինքը երկար տարիներ իսկապես զբաղվեց Սայաթ-Նովայով հանուն Սայաթ-Նովայի և իր մենագրության մեջ ու հոգևածնելով արդարացի կրթությունը մերժել է լուրը նրանց, ովքեր պարզապես են Սայաթ-Նովայով ընդդեմ Սայաթ-Նովայի և դիտություն: Այս իսկ պատճառով նրա մենագրության բանասիրական մասը հատկապես ունի բանավեճային բնույթ, և դա թերևս անհրաժեշտ էր:

Ամենից ավելի սուր բանավեճերի տեղիք է տվել Սայաթ-Նովայի ծննդյան թվականի հարցը: Տվյալ դեպքում այդ հարցը որոշակիորեն առնչվում է բանաստեղծի գրեթե ուղիղ կենսագրության լուսարանմանը, ուստի և նրա գիտականորեն ճիշտ լուծումն ստանում է մեծ կարևորություն: Սայաթ-Նովայի առաջին կենսագիր Գևորգ Ախվերդյանը ենթադրաբար գրել է, թե Սայաթ-Նովան ծնված պետք է լինի 1712-ին: Գ. Ախվերդյանի այդ հաշվարկն անհամոզիչ էր և նրա օրոք արդեն վիճարկվեց և առաջ քաշվեցին երգչի ծննդյան նոր թվականներ՝ 1711—1726-ի սահմաններում, Մի տրամաբանական հաշվարկի հիման վրա Կ. Կեկելիձեն որպես Սայաթ-Նովայի ծննդյան թվական առաջարկեց 1722-ը: Ըստ ամենայնի դժգոհվելով երգչի ծննդյան թվականի խնդրով, Պ. Սեակը **15** փաստով ու կովանով ապացուցեց, որ Սայաթ-Նովան իսկապես ծնվել է 1722-ին: Եթե այդ ապացույցներից մի քանիսը տարակուսելի են, մեկ-երկուսը՝ պարզապես անընդունելի, ապա մի քանիսն էլ այնքան համոզիչ են, որ ոչ մի առարկություն չեն ընդունում: Այդուհանդերձ, Պ. Սեակից հետո դարձյալ պաշտոնապես շրջանառության մեջ մնաց ավանդական ու ենթադրյալ 1712-ը, շատերի կողմից հարցը համարվեց լուծված, և կատարվեցին երգչի ծննդյան թվականի տեղաշարժման մի քանի նոր անհաջող փորձեր:

Նույնքան համոզիչ քննությամբ բանաստեղծ-գիտականը վերջնականապես լուծեց նաև երգչի կենսագրության կնճոռոտ հարցերից մեկ ուրիշը՝ նրա սիրտ առեղծվածը: Զարդացնելով Գ. Ասատուրի, Մ. Աղայանի և Մ. Հասրաթյանի վարկածը, նա մի շարք փաստարկներով հաստատեց, որ Սայաթ-Նովայի ճակատագրական սիրտ առարկան իսկապես եղել է վրաց թեյմուրազ արքայի դուստրը, Հերակլ II-ի քույր Աննա Բատոնիշվիլին: Պ. Սեակի այս ապացույցը ևս զրկաբաց ընդունելություն չգտավ, համարվեց անհավանական ու «լեզենդային», և որոշ բանասերների կողմից այդ ըստ ամենայնի հիմնավորված ապացույցին հակադրվեցին հիմնադրուկ կարծիքներ: Այստեղ անհնարին և թե-

⁹ Պ. Սեակ. Սայաթ-Նովա. Երևան, 1969, է. 95:

րևա անտեղի է բերել Պ. Սևակի փաստարկները՝ հաստատելու համար նրա ապացույցը. նախապատրաստված և շնախապաշարված ընթերցողն ինքը կարողավ մենագրության համապատասխան բաժինը, կարող է միանգամայն համոզվել դրանում: Այսպեղ կբերենք առաջադրված փաստարկներից միայն մեկը. Այսպես, Սայաթ-Նովան իր հանրահայտ հայերեն խաղերից մեկը սկսել է հետևյալ տողով. «Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի բերսօժ գիղենաք»: Պ. Սևակն, առաջինը լինելով, իրավամբ, այս տողը ընկալել է ոչ իբրև փոխաբերություն, ինչպես արվել է նրանից առաջ, այլ կենսագրական ակնարկ: Տողի իմաստն է՝ ես և իմ սիրեկան յարը ծնվել ենք միևնույն տարեթվին: Վկայակոչելով Գ. Լեոնիձեի «Բեսիկի» վրացերեն աշխատությունը (Թբիլիսի, 1953, էջ 83), Սևակը ցույց է տվել, որ արքայաքույր Աննան ծնվել է 1722 թ.: Սա նշանակում է, որ Սայաթ-Նովան ևս ծնվել է 1722-ին և միաժամանակ հաստատում է, որ նրա «սիրեկան յարը» իպկպես եղել է արքայաքույր Աննան: Ի հաստատումն սրա ասենք, որ Սայաթ-Նովան վրացերեն խաղերից մեկում էլ, որն ունի կենսագրական բնույթ և որտեղ զաղտնագրված է Աննա անունը, ակնարկել է իր և իր սիրուհու հասակակից լինելը՝ «Թու մարթլա խար շեմի տոլի» («Թե իրոք իմ հասակին ես»)՝¹⁰ Կատարելով մի շարք նմանօրինակ համոզիչ փաստարկներ, Պ. Սևակն իրավացիորեն եզրահանգել է, թե «այսքանից հետո մի՞թե այլ իմաստ չի ստանում Սայաթ-Նովայի ծածկագրությունների փաստը ինքնին: Ինչո՞ւ պիտի նա դիմե՞ր ծածկագրությունների, եթե իր «սիրեկան յարը»-ը լիներ մի սովորական գեղեցկուհի և ոչ թե մի «ուրիշ յար»: Իսկապես էլ «ուրիշ»՝ մի արքայադուստր և արքայաքույր միաժամանակ: Եվ այսքանից հետո մի՞թե չի կարելի ասել, որ Սայաթ-Նովայի ծննդյան հարցի հետ մեկտեղ, երջանիկ զուգադիպությամբ, վերջնականապես լուծվում է նաև առեղծվածը «սիրեկան յար»-ի, որ եղել է Աննա Խատունիշվիլին՝ վրաց Թեյմուրազ թագավորի դուստրը, Հերակլ արքայի քույրը, Դեմետրե Օրբելիանի իշխանուհին»¹¹:

Սայաթ-Նովայի եռալեզու խաղերում առկա կենսագրական տվյալների մանրադնին ուսումնասիրությամբ Պ. Սևակը լուսաբանել է երգչի կենսագրության մի քանի մոլթ հարցեր ևս: Նա ստուգապես ապացուցել է, որ հանճարեղ աշուղը իր ստեղծագործական ուղին սկսել է 1742 թ., երբ եղել է քսան տարեկան և դրանով մեկ անգամ ևս ցույց է տվել Սայաթ-Նովայի ծննդյան թվականը՝ 1722: Նա ճշտել է նաև արքունիքից Սայաթ-Նովայի առաջին վտարման ու վերընդունման տարիները: Նրա հաշվարկով երգիչը պալատից վտարվել է 1752 թ. գարնանը և վերընդունվել 1754-ի ապրիլին: Պես:ք է ասել, որ Սևակի որոշ մեկնաբանությունների, ենթադրությունների և հատկապես սայաթնովյան ծածկագրերի վերծանությունների մեջ առկա են հակասություններ ու անճշտություններ, սակայն երգչի կենսագրության ուսումնասիրության մեջ նրա ներդրումն անժխտելի է և չափազանց կարևոր:

Բանասիրական սուր կրքով, բաց և փաստական ամուր հենքի վրա է շարադրված նաև մենագրության «Ծանոթագրություններ» բաժինը: Հստակորեն կողմնորոշվելով թե՛ հայկական և թե՛ վրացական աղբյուրների մեջ, Սևակը բանասիրական հմտությամբ բացատրել է Սայաթ-Նովայի կյանքի և գործի լուսաբանմանը նպաստող մի շարք հասկացություններ, գրական և պատմական երևույթներ: Այսպես, իր երկու վրացերեն խաղերի մեջ Սայաթ-Նովան իրեն անվանել է խումարի, որը Գ. Լեոնիձեի բացատրությամբ նշանակում է ծաղրածու: Սուլխան-Սաբա Օրբելիանի նշանավոր «Բառարանի» հիման վրա Պ. Սևակը ճշտել է խումար բառի իմաստը և նկատել, որ Սայաթ-Նովան վրացական արքունիքում, երգիչ-նվագածու լինելուց բացի «վարել է նաև ոչ քե սալբաթուի անաղական պաշտոն, այլ զբաղվել է «խումարա»-ով, որ է «խոսի արվեստը» երգիծաբար և «շնորհալի խոսք» սրամտորեն»¹²:

¹⁰ Տառ-Տոգ, յարտղու լեյլեյ, տծոլոն, 1963, 83. 60.

¹¹ Պ. Սևակ. Սայաթ-Նովա, էջ 66:

¹² Նույն տեղում, էջ 371:

Պ. Սևակը մեկ առ մեկ վիճարկել է Սայաթ-Նովայի վերաբերյալ բանասիրության մեջ հայտնված բոլոր թյուր կարծիքներն ու տեսակետները և ձգտել է առկա փաստերից կատարել առավել սթափ ու տրամաբանական եզրակացություններ, նա ծավալուն էջերով հանդես է եկել հատկապես այն բանասերների դեմ, ովքեր շահագնացել են Սայաթ-Նովայի գիտելիքները պարարի և արեւելյան լեզուների բնագավառում: Երգչի ինքնագիր ձեռագրերի, նրա լեզվի ու ոճի քննությամբ հեղինակը եկել է այն եզրակացության, որ Սայաթ-Նովան կանոնավոր կրթություն չի ստացել, չի սովորել գրարարի քերականությունն ու ուղղագրությունը, այլ «ինքնուսուլթյամբ, ի վերուստ իրեն տրված Բագառիկ լեզունակութունների շնորհիվ տիրապետել է 3—4 լեզվի, սովորել է գովել կարգալ 3 յաբուրենով, յուրացրել է աշուղական բաղմարարդ արվեստի գաղտնիքները (այլևս չիտակել նրա՝ իրրեկ երգչի ու երաժշտի ձեռք բերած հմտությունների մասին)»,— հենց ա՛յս հանգամանքը Սայաթ-Նովային շատ ավելի է բարձրացնում սերունդների աչքին, շատ ավելի է շեշտում նրա բացառիկ բնագունակություններն ու հանճարը, քան բռնաձգված այն պնդումը, թե նա ստացել է վանական (ուրեմն քիչ թե շատ կանոնավոր) կրթություն¹³: Այս ամենը ճիշտ է. միայն պիտի ասել, որ «աշուղական բաղմարարդ արվեստի գաղտնիքներին» Սայաթ-Նովան տիրապետել է ոչ թե ինքնուսուլթյամբ, այլ, իր իսկ վրկայությամբ, ուսուցիչ-վարպետի՝ փիր-ուստադի մոտ ուսանելով:

Սայաթ-Նովայի ստեղծագործությունը գրական վերլուծության ենթարկելուց առաջ Պ. Սևակն անհրաժեշտաբար անգրադարձել է գուսան-բանաստեղծի հեղինակային տիպի մեկնաբանությունը: Սայաթ-Նովան ժառանգորդն էր հայ բաղմարար քնարերգության, որը, սակայն, պատմաբաղադական տիպի հանդամանքների բերումով մասամբ հանգել էր աշուղության, այսինքն՝ դադարել էր լուրիս իմաստով գրականություն լինելուց: Միջնադարի վերջին և սորժամանակների առաջին խոշոր հայ քնարերգուն հանդես եկավ որպես աշուղ, ստեղծագործելով օտարամուտ աշուղական երգարվեստի ձևերով: Սակայն աշուղահանդերձ Սայաթ-Նովան մնաց հայ ժողովրդական երգիչ և շնորհիվ իր բրնատուր տաղանդի նա «ժողովրդական երգչի արհեստը վերածեց բանաստեղծի վեհ կոչման» (Վ. Բրյուսով):

Խոսելով աշուղների և Սայաթ-Նովայի մասին, Պ. Սևակը նկատել է, որ վերջինս «իր երակներով չէր կարող կպած չլինել իր նախորդների երակներին: Բայց ճիշտով տարբերվում էր նրանցից՝ եթե ոչ բոլորովին, ապա վճռականապես: Սա պիտի շարունակեր անել նույնը, ինչ իր նախորդները՝ տալով նրանց և իր իսկ գործի սահմանումը («խալխի նոքար»): Սա պիտի չհրաժարվեր «սոցիալական պատվեր»-ից, որովհետև այդ հրաժարումը հավասար է անհնարինության: Բայց այդ պատվերը կատարելիս սա պիտի տար իր ունեցածը և ոչ թե իրենից պահանջվածը: Այլ կերպ ասած՝ լինելով «խալխի նոքար»՝ նա պիտի մնար ինքն իրեն հետ, պիտի մնար ահալ և ստեղծագործեր զուտ անհատական մի քնարերգություն, այլ կերպ ասած՝ լինելով աշուղ, պիտի դառնար ճշմարիտ բանաստեղծ»¹⁴: Այս անհատականության շնորհիվ է, որ Սայաթ-Նովան մտնում է գրականության պատմության մեջ, ավելի ճիշտ՝ «գրականության մեջ՝ կենդանի և ապրող, կարգացող ու երգվող, միշտ ճարվող, բայց միշտ էլ փնտրվող գրականության մեջ»¹⁵: Ահա թե ինչու միանգամայն անբնորոշելի է երբեմն հայտնվող այն կարծիքը, թե Սայաթ-Նովան սոսկ աշուղ է, ուստի և գրականությունից անկախ երևույթ է, դուրս է գրականության գիտական ըմբռնումից:

Բանասերը, որ ամբողջ լայնությամբ դիտարկել էր հայ բաղմարար քնարերգությունը և ընկալել նրա զարգացման ընդհանուր տրամաբանությունը, միշտ էլ ասել և նշել է Սայաթ-Նովայի վիթխարի մեծության առակությունը

¹³ Նույն տեղում, էջ 403:

¹⁴ Նույն տեղում, էջ 134:

¹⁵ Նույն տեղում, էջ 177:

Հայ գրականության տարբեր հորիզոնականներում: Այսպես, դեռևս Մեսրոպ Մաշտոցին նվիրված վերոհիշյալ հոդվածում գրել է. «Հոգմացրիվ արված մեր հին մշակույթի տեղ նա սկզբնավորեց մի նոր մշակույթ, որ պիտի գլուխգործոցներ տար համաշխարհային քաղաքակրթությանը... Սայաթ-Նովայի բարբառով, որ պիտի լեզու դառնար Չարենցի բերանում...»¹⁶: Իսկ Պ. Դուրյանին նվիրված հոդվածում Սևակն ասել է. «Նա եկավ՝ դառնալու այն կամրջասյունը, որի վրա՝ հսկայական աղեղ գծելով, հակառակ կողմերից պիտի միանային հայրեններն ու վարուժանը, Սայաթ-Նովան ու Տերյանը»¹⁷:

Պ. Սևակը թափանցել է Սայաթ-Նովայի լեզվի, պատկերների, զգացմունք-լեռի ու խոհերի աշխարհը, բացել նրա որոշ տողերի այլաբանական կամ զգացմունքային խորքը: Ահա «մե քիչ կամաց գրնա, դողալ» սայաթնովյան հատնի կիսատողը ինչպես է ընկալել ու բացատրել բանաստեղծ-բանասերը. «Այս «մե քիչ կամաց գնա»-ից ու որ չի կարող շարժելակել իր ջալըը՝ թեկուլ բնադրական պրկումով, որովհետև հասարակ ու պարզուկ այս հորդորը ինչ-որ անբացատրելի վերասլացքով վերանում ու վերածվում է մի վերին փիլիսոփայության՝ կաշելով ու չափովելով մեր լեզվից, դառնալով կյանքի ուղեկից, վարի կալմարար և անտեղիտալի մի կրկներգ՝ բոլոր նրանց համար, որոնց լիճակված է կյանքի թոհուրոհի միջից լսել անորսալի ձայնը ներքին խրտումների, անընկալու շշուկը հոգևոր նյութերի եռման, անձայնագրելի շրջունը ոգեղեն այն թևաբախման, որով մարդը ջնջում է իր հեռավոր նախահոր հեռկալող կավճե գիծը, որպեսզի ընդգծուն երևա սահմանը արարչագործության»¹⁸: Մենագրությունը հառուստ է սայաթնովյան տողերի ու բանաստեղծական վիճակների նմանօրինակ, եթե կարելի է ասել՝ գեղարվեստական վերլուծություններով, որոնք որոշ առավելություններ ունեն դուրս գիտական-տրամաբանական վերլուծությունների նկատմամբ: Ա. Արիստակեսյանի բնութագրմամբ «Պ. Սևակի գրականագիտական մտքի թռիչքը, հոգեբանական խոր թափանցումները, դիպուկ բնութագրումները, չասվածները կարդալու, լուսությունները վերծանելու, փակագծերը բացելու, վերլուծելու ու ընդհանրացնելու մեծ կարողությունը մենագրության այս մասին անխամրելի փայլ են տալիս: Այստեղ, առանց չափազանցության կարելի է ասել, որ Պ. Սևակի գիտական ներշնչանքը հավասարվել է նրա բանաստեղծական ներշնչանքին, գրական, գեղադրական երևույթների, բանաստեղծի կոչման պատկերավոր բնութագրումները, որ սփռված են չորաքանչյուր էջում, բարձրացել են թևավոր խոսքի առտիճանի և մեկնաբանության հարուստ նյութ կարող են տալ գրականության տեսաբաններին»¹⁹:

Ուսումնասիրելով Սայաթ-Նովայի բարդ պոետիկան, Պ. Սևակը ցույց է տվել, թե որտեղ է փայլատակել և որտեղ է խամրել նրա բանաստեղծական անհատականությունը, այսինքն՝ մատնանշել այն անտեսանելի սահմանագիծը, որով Սայաթ-Նովայի մեջ բաժանվում են աշուղն ու բանաստեղծը, արհեստավորն ու արվեստագետը: Միանգամայն ընդունելի է նրա այն տեսակետը, որ «եթե իր սիրածի գովքի մեջ Սայաթ-Նովան շատ էլ անհատական չէ, ապա իր սերն ու կարոտը, իր սպանչանքն ու տառապանքը անհատական են համարյա միշտ»²⁰: Որպես «հմուտ ոսկերի» գրականագետ-բանաստեղծը ամենայն մանրամասնությամբ քննել է գուսան-բանաստեղծի հոգու զաղտնարանները, տարբերակել ոսկին ավագից և ցույց տվել ոսկու իսկական արժեքը, այսինքն՝ այն նորն ու լուրահատուկը, որ ներդրել է Սայաթ-Նովան աղբային և համաշխարհային գրականության գանձարանում:

16 Պ. Սևակ. Երկեր. հ. 3, էջ 43:

17 Նույն աեղում, էջ 81, հմմտ. էջ 159:

18 Պ. Սևակ. Սայաթ-Նովա, էջ 218:

19 Ա. Արիստակեսյան. նշվ. աշխ., էջ 332:

20 Պ. Սևակ. Սայաթ-Նովա, էջ 171:

Պ. Սևակը Սայաթ-Նովայի ստեղծագործությունը դիտել է այն ժամանակի ու տարածության մեջ, ուր ծնվել ու սնվել է մեծ բանաստեղծը: Նա ուսումնասիրել է ժամանակի պատմաքաղաքական անցքերը, սոցիալ-տնտեսական կառուցվածքը, մշակութային արժեքները, իշխող իրավական կարգերն ու բարոյական նորմերը: Նա ցույց է տվել այդ իրականության և բանաստեղծի ողորդական հակադրությունը: Սայաթ-Նովան բաղմիցս իրեն «լարիբ բլբուլ» է կոչել, և Սևակի բացասությունը, երդիչն իրեն լարիբ էր զգում ոչ թե Վրաստանում, այլ այն պայմաններում, որոնց մեջ գտնվում էր ինքը Վրաստանն էլ, այն է՝ դասային անհավասարության և վիթխարի անարդարության: «Ու երգում էր այդ ԲԻՐՈՎԻՐ ոչ թե լուկ այն, ինչի համար ծնվել էր, այսինքն՝ սեր, այլ նաև այդ դաժնիքներն էլ, այսինքն՝ իր օտարությունը աշխարհի կարգ ու սարքին, ավելի ճիշտ՝ աշխարհի անկարգ-անսարքությանը»²¹:

Բացահայտելով Սայաթ-Նովայի բանաստեղծական ինքնատիպ աշխարհը, Պ. Սևակը ձգտել է դրանով հերքել Ռ. Քրիլինդի այն ասույթը, թե «Արևելքն Արևելք է, Արևմուտքն՝ Արևմուտք, և իրար երբեք չեն հանդիպելու»: Արևելքի ու Արևմուտքի մշակույթները, հիրավի, որոշակիորեն տարբերվում են իրենց ներքին կառուցվածքով, սակայն այդ անջրպետը չինական պարիսպ չէ: Արևելքն ու Արևմուտքը հանդիպում, մերձենում (բայց ոչ համադրվում, համասերվում) են իրար հատկապես հայ միջնադարյան քնարերգության և առավելապես այնպիսի խոշոր ու ինքնատիպ գրական անհատականության շնորհիվ, ինչպիսին Սայաթ-Նովան է: Հետևաբար, իրավացի էր բանաստեղծ-գիտնականը, որ Սայաթ-Նովայի ստեղծագործությունը դիտել է ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի տեսադաշտի վրա:

Սայաթ-Նովան ղուրս չէր իր ժամանակից, բայց որպես խոշոր արվեստագետ նա նաև վեր էր իր ժամանակից: Ըստ այդմ, Պ. Սևակը նրա ստեղծագործության մեջ տեսել է և մատնանշել որոշ ընդհանուր տեղեր մի կողմից Գրիգոր Նարեկացու, հայրենների, Ֆրիկի, Նաղաշ Հովնաթանի, Մ. Մեծարենցի, Պ. Դուրյանի և Կոմիտասի, մյուս կողմից՝ Ռուդաբիի ու Խայամի, մեկ այլ կողմից էլ տրուբադուրների, Շեքսպիրի, Բողերի և Ուալդի հետ: Ցույց տալով սայաթնովյան երգերի և շերտայրյան սոնետների միջև եղած ընդհանրությունները, որ առաջինը նկատել է Հովհ. Թումանյանը, Սևակը բացահայտել է այն համամարդկային ու համաժամանակյա ղգացողությունները, որ առկա են տարբեր ժամանակներում ու պատմական պայմաններում ապրած և տարբեր ազգերի, պատկանող երկու հանճարեղ ստեղծագործողների երկերում: Նման քննական համեմատական մեթոդով առավել ճշտվում է Սայաթ-Նովայի ստեղծագործության տիպաբանությունը և նրա տեղը թե՛ ազգային և թե՛ համաշխարհային գրականության պատմության մեջ:

Անշուշտ, կարելի է վիճարկել սեական որոշ ղուգահեռներ, կարծիքներ ու ղատողություններ, սակայն Սայաթ-Նովայի ստեղծագործությանը տրված նրա ընդհանուր գնահատականներն ու բնութագրումները ստույգ են և գիտականորեն հիմնավորված: Սայաթ-Նովայի ստեղծագործության ներքին ծալքերն ու նրբերանգները ճշտորեն բացահայտելուց հետո միայն կարելի է եղրահանգել, թե նա՝ «ազգային է Գողթան երգիչների չափ»: Սայաթ-Նովայի «հոգու կալվածքը» մտնելուց հետո միայն կարելի է տեսնել այնտեղ «հինավուրց և գմբեթաշատ մի քաղաք. որ բաղմացնում է արեգակի շողքերը՝ իր գմբեթների ալաբաստինով: Այսինքն՝ մի բառեղեն ճարտարապետություն՝ իր ամրոցներով ու վանքերով, իր ղղականերով ու աղոթատեղիներով, ղարղաքանդակների մի այնպիսի ղարմանաղան ճոխությամբ ու անկրկնելիությամբ, որ ունի մեկ էլ իր ազգային շինարվեստը»²²: Եվ վերջապես, Սայաթ-Նովայի տեղն ու գերը հայ գրականության մեջ հստակորեն պատկերացնելուց հետո միայն կարելի է գրել, թե «Սայաթ-Նովան սոսկական բանաստեղծ չէ, այլ սահմանագծային բա-

21 Նույն տեղում, էջ 258:

22 Նույն տեղում, էջ 334:

նաստեղծի իր թիկունքով նա դարձած է դեպի այն բազմադարյան անցյալը, որի մեջ են մխված իր արձատները: Իսկ իր դեմքով՝ տրտմության մեջ էլ մշտապես պայծառ իր դեմքով նա նայում է մեզ»²³:

Պարույր Սեակը. հնչաես Ավ. Իսահակյանը, Սայաթ-Նովայի մեջ տեսել է իր սեփական բանաստեղծական ճակատագրի առձագանքը, տեսել է «իր նրմանին», ուստի և բացահայտելով նրան, միաժամանակ բացահայտել է նաև իրեն, իր գնդագիտական ըմբռնումները, պատմաբանասիրական հակումները, իր հավատամքներն ու իրեն ալեկոծող խնդիրները, որոնք ընդ-որ տեղ ընդհանրական են տարբեր ժամանակաշրջաններում ապրած ճշմարիտ բանաստեղծների համար: Այդ է պատճառը, որ նրա ուսումնասիրության մեջ սենք տեսնում, զգում ու ճանաչում ենք երկու իրարից շատ տարբեր և իրար շատ նման բանաստեղծի՝ Սայաթ-Նովա և Պարույր Սեակ՝ երկու թանկ ու նվիրական անուն:

ФИЛОЛОГИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ ПАРУЙРА СЕВАКА

(К 60-летию со дня рождения)

Г. Г. БАХЧИНЯН

Резюме

В своих литературоведческих и литературно-критических статьях и докладах П. Севак осветил ряд вопросов истории армянской литературы и современного литературного процесса, дал оценку творчеству Григора Нарекаци, Петроса Дуряна, Мкртича Пешикташляна, Ованеса Туманяна и Егише Чаренца. Однако в центре его научных интересов были жизнь и творчество Саят-Новы. Севак установил дату рождения Саят-Новы и уточнил несколько других важных вопросов биографического характера, подверг глубокому анализу творчество великого поэта-ащуга, выявил особенности его лирики, раскрыл его значение в истории армянской поэзии.

²³ Նույն տեղում, էջ 365: